



առաջից հացը վերցրել տարել են. նա նստել է մինչեւ վերջը առանց ձաշելու:

Միաբանները ժողովելուց յետոյ օրուայ հերթավարը իբր ժամօրհնող<sup>28</sup> սկսել է «Հրատարիմ»ը, ապա հերթավարն ասել է «Սոստոլանիմ»ը եւ հաւատամք»ը, ապա չոքել է, վեղարը հանել եւ բարձր ձայնով անդերը ասել է «Մեղայն», որ ասում էր ի դիմաց բոլոր միաբանների. ժամօրհնողը «Ողորմեսցին» ասել է. եւ ապա սովորական կերպով առաւօտեան ժամն ասել. պատարագի օրերին ասել են «Չարթիք»ն եւ կից «Անբաժանելի», որ կայ ժամագրքում: Ամէն շաբաթ օր թէեւ պատարագ չէ եղել, բայց մինչեւ Օրհնութիւնը եղել է պատարագ օրուայ ժամերգութիւն. մինչեւ որ Մկրտիչ Ա. կաթողիկոսը 1901 թուին կոնդակով վերացրել է այդ կարգը: «Չարթուցեալքս» քարոզից յետոյ ժամօրհնողը ասել է սրբոց տօներին 50, պահոց օրերին 100 «Տէր ողորմեա», ապա կցել է աղօթք. «Տէր դու ստեղծեր, մի կորուսաներ եւ զգործս ձեռաց քոց մի անտես առներ, բարեխօսութեամբ սրբոց Աստուածածնի եւ ամենայն սրբոց քոց յիշեա՛ զմեզ Տէր եւ ողորմեա» (ժամագրքում այս մասը չկայ): «Զբէն դոհանամք» աղօթից յետոյ սկսել են նախընթաց եւ նոյն օրուայ երկու կանոն սաղմոսն ասել թիւ, ժամօրհնողը եւ հերթավարը: Նոյն ժամանակ ժողովրդի մէջ եւ աջ եւ ձախ դասերու տիրացուները եւ մահտեսիները զոյգ-զոյգ եղած, նոյն կանոնները ասել են ցած ձայնով: Նոյն օրուայ կանոնադուրը ասել են դասերից ձայնով, իսկ հերթավարն ու ժամօրհնողը նոյնն ասել են ատենանում ցած ձայնով: Մնացածն ըստ սովորականին մինչեւ Հարցը: Առ հասարակ բոլոր փոխերն ասել են լրիւ, մինչեւ վերջը. Հարցի փոխի մէջ երբ հասել են այն տեղը, ուր ասում է «Օրհնեալ ես դու Տէր Աստուած» դաս առ դաս երգել են ձայնով «Օրհնեալ ես Աստուած» Հարցի իւրաքանչիւր տունը, մինչեւ «Գործ»ի տունը կրկնել են երեքական անգամ. «Գործ»ի անից սկսած երկուքական անգամ: «Մեծացուցէ»ից սկսած մնացեալ շարահանների իւրաքանչիւր տունը կրկնել են երկուքական անգամ. եթէ շարականը չորս անից է, կրկնել են միայն առաջի եւ վերջի տներն երկու անգամ. եթէ հինգ անից է,

<sup>28</sup> Հերթավարութիւնը եւ ժամօրհնողութիւնը յաջորդաբար շաբաթուայ մէջ կատարել են երկու փարպակները:

կրկնել են սկզբի կամ վերջի տունը միայն. եթէ վեց անից է, առանց կրկնելու: Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ ասել են «Արեւազալ»ի ժամերգութեան միայն մաղթանքները, սաղմոսները եւ աղօթները լրիւ առանց երգերի, պահոց օրերին նաեւ երգերը, ինչպէս մեծի պահոց օրերին է լինում: Արեւազալի ժամերգութիւնից յետոյ չոքում են բոլոր միաբանները, սրբոց տօներին երգում են Յակովբայ Մծբնայ Հայրապետի հարցից երեք տուն եւ ապա «Տէր ողորմեա» չորս տուն: «Արի Աստուած», «Զի դիտացաք», «Միջնորդութեամբ», «Արդ անկանիմք», պահոց օրերին երգել են ապաշխարութեան գլ. Հարցի երեք տուն, «Սուրբ Աստուած» ու մնացեալը նոյն կերպով: Զորեքշաբթի օրերը Տէր ողորմեայի մինչեւ երկու տունը երգել են Աստուածածնի նուիրում երգ «Աստուածածին ամենօրհնեալ» կամ «Աստուածածին թագ պարծանաց» կամ «Բանին կենաց» եւ այլն. իսկ Ուրբաթ օրերին խաչի նուիրում երկու տուն «Մեծ ի յայն փայտն եւք յուսացեալ», «Դողան ի քէն դունդը խաւարին»: «Տէր ողորմեա»ից յետոյ մաղթանք «Վասն սրբուհւոյ Աստուածածնին» քարոզ «Սուրբ զԱստուածածին» աղօթք «Ընկալ Տէր». ժամօրհնողն արձակման Հայր մեր է ասել:

Ձաշու ժամը ձմեռն սկսել է ժամը Տին, ամառը Գին. լուսարարի օդնականը իմաց է տուել հերթավարին որը մի այլ վարդապետի հետ ասել է մի կանոն սաղմոս, այն կանոնը, որը դիմաց է օրուայ կանոնին (այսինքն եթէ օրուայ ձայնը ալ է կ'ասէ գլ. կանոնը) եթէ աճ է՝ դձ. ինը եւ այլն): Ապա երբ հաւաքուել են սկսել են «Ողորմեա»ները ըստ սովորականին կիրակի եւ սրբոց տօներին առանց մեծ քարոզների եւ աղօթների. պահոց օրերին, ասում են ինչպէս Մեծ պահոց յետոյ, եթէ պահոց օր է ասում են յաջորդ ձայնի կանոնը. նոյնը եւ բ. եւ գ. Ողորմեաներից յետոյ. ապա հետեւեալ ձայնի կանոնը:

Երեկոյեան ժամին սկզբում կարգում են «Ի նեղութեան» կանոնը. ապա տրւում է հասարակ զանգը. տիրացուներից կամ վարդապետներից մէկը կարգում է աւուր պատշաճի «Յայտաւուրք»ը, վերջացնելուց յետոյ երգում են տօնի պատշաճ Ողորմեան, Մեծացուցէն եւ թաշի շարականները: Ժամ-

օրհնողն ասում է «Աղաչեմք ողորմեաց, Տէր բարերար», քարոզ «Սուրբ ճգնաւորքն», աղօթք «Որ ընտրեցեր» կամ «Պատիւ սրբոց», ապա մաղթանք «Յիշատակն սրբոց օրհնութեամբ եղիցի, մաքուր աղօթիւք եւ բարեխօսութեամբ սրբոց (այս ինչ անուն) որոց յայսմ երեկոյեանս երանելի վարուց եւ բարի մահուան նոցին ընթերցաք Տէր Յիսուս ընդ մեզ հաշտեսցիս եւ սրբոյ անապատիս նուէր ընծայողացն սիրով դիմացիս», ապա «Ես առ Աստուած» եւ այլն ըստ կարգի: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ կատարում են խաղաղականը. բացի տէրունական տօներից: Սրբոց տօներին «Տէր լոյս իմ»ից յետոյ վերջանում է<sup>29</sup>, ապա նորեց «Տէր ողորմեա»ն, առաւօտեան ժամերգութեան ձեւով. պահոց օրերին փոխերն լրիւ ասում են:

Հանդստեան ժամ. արեւմտից յետոյ կատարում է Հանդստեան ժամերգութիւնը համաձայն ժամագրքի: Մնացած մանրամասնութիւնները տես Յուսիկ եւ. Անապատը եւ Վանականութիւն էլ 143—153:

Միաբանների զգեստները որոշ չափով անապատականի վայել էր. բոլորը հագնում էին ուղտական ամերկանից շապիկ, վարտիք երկու տակ, մի երեսը սպիտակ, միւսը սև, բրդէ գուլպա, դրսում կոնդոլա (կիսափոշիկ, կոպիտ ձեւի). եկեղեցում բոլորն էլ հողաթափ են հագել: Ծապկի վրայից արեւալուս, բամբակ դրած, կապոյտ ամերկանից նախու շալից, բրդի կապայ, նոյն կտորից շալուար խոնջանով, նոյն կտորից վերարկու: Վարդապետները եւ սարկաւադները արտօնութիւն ունէին բարակ կապայի. երեսը կապոյտ բոնքայից: Վարդապետները տիրացուները եւ մահտեսիները վաճառ մէջ ամառը ծածկում են գուլպի թաթ. ձմեռը մորթի փափախ. վարդապետները միայն եկեղեցի գալիս դնում են վեղար, հասարակ կտորից, բոլորն էլ նոյն զգեստը ստանում են երկու տարին միանգամ: Վարդապետները քեշմիլի շալից դօտի էին կապում, իսկ մնացածները բոնքայ կտորից: Ամէն մէկուն տրւում էր մէկական վերարկուի կտոր, արխալուս, շալուար, երեքական շապիկ եւ վարտիք, թաշկինակ կարմիր կամ սև գոյնի. երես սրբէ մէկ հատ, ձեռքի

<sup>29</sup> «Շնորհեա մեզ Տէր» երգը ըստ անհղութեան կապուած է Սեւանի անապատի հետ. ուստի եւ միշտ ասում են այն տեղ: Տես Մ. Կիւմիւրլիսանցի 32—38եր:

սապոն երեք հատ, տարեկան 10 գրուանքալուացքի սապոն:

Առաւօտեան ժամից յետոյ իւրաքանչիւրը իւր սենեակում ուտիս օրերը ուտում էր հաց ու պանիր, պաս օրերին հաց. վերջերս սկսել են գործ ածել եւ թէյ: Ձաշին եւ երեկոյեան բոլորն էլ սեղանատուն էին դնում. ձաշին միշտ մէկը կարգում էր Հարանց վարքից, Վարք սրբոցից, Սարգիս Շնորհալուց: Ուտիս օրերը միշտ լինում է իւղեղէն, մի տեսակ կերակուր բրինձից, ածարից կամ ձաւարից, յաճախ նաեւ ձուկ. երեկոները պանիր, մածուն կամ թանապուր: Պաս օրերին ձիթով կամ ընկոյզով կերակուր, երեկոները՝ բոխի, հատխաչ լոբի, դեմնախնձոր՝ երբեմն ձիթով տապակած կամ ցամաք հաց:

Բացի Մեծ պատից եւ շաբաթական ու օրական պատերից կար եւ երկու յիսնակի պաս. մէկը Հոգեգալտտան պատից մինչեւ վարդապատ, միւսն էլ աշնան յիսնակի սկզբից մինչեւ աւագ տօները: Ծննդեան առաւօտը, Վարդապատին, երբեմն վանահօր տօնին արտակարգ հիւրասիրութիւն էր լինում վանահօր կողմից: Ամառը երբեմն բաժանում էր միւրգ՝ ձմերուկ, սեխ, խաղող. ձմեռը՝ բաժանում էր գինի, Մեծ պատին միաբաններին բաժանում էր ձիթապտուղ 15ական գրուանքայ:

Կային հասարակական աշխատանքներ, որոնց մասնակցում էին բոլորը. օրինակ դարնանը դնում էին Սեւանի կղզու դիմացի Գիւնէի սարերը բոխի քաղելու. այնտեղ մնում էին մի քանի օր. խոտաքաղին դնում էին խոտատեղին կէմ էին ոլորում. դրսից բերած ցանն ու ցախը կրում էին ներս. բերած ցանն ու ցախը կրում էին ներս. շաբաթուայ մէջ հաւաքում էին 1—2 անգամ թխուելիք հացի գունդն էին անում. վարժխուելիք հացի գունդն էին անում. վարդապետները այս բոլոր աշխատանքներին դաստիարակուց ազատ էին, բացի վերականգնողից: Օրուայ մնացած ժամանակը կարգում, գրում, շրջում էին:

Այս սովորութիւններից, կենցաղից եւ ժամերգութիւններից շատ չնչին բան մնաց. անապատը կորցրել է իւր արտաքին հմայքն իսկ. հայ ժողովրդի կրօնական կեանքը մի փոխուել է, նրա հետ եւ նոյն կեանքից մի գողարիկ օջախի՝ Սեւանի ճրագը շատ է աղօտացել:

(Շարունակելի:)

ԳԻՆԻՏ ՇՊԻՍԿՈՊՈՍ